

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ  
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄ - Ա

ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ  
ԵՂԵՎՆԻՆ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ քաղաքի կենտրոնական հրապարակում գտնվող եղևնին ի սկզբանե ունեցել է թեքվածություն, թեքությունն ու անհամաչափ տեսքը հնարավորություն չեն տալիս Ամանորին ծառը զարդարել ըստ պատշաճի, 2023 թվականի դեկտեմբերին գրանցված ուժեղ քամիների հետևանքով եղևնու գագաթը կոտրվել է՝ այն դարձնելով առավել վտանգավոր, ավագանին **որոշում է**.

1. Համաձայնություն տալ Սպիտակ քաղաքի կենտրոնական հրապարակում տնկված եղևնին ապամոնտաժելուն և Սպիտակ համայնքի Զրաշեն բնակավայր տեղափոխելուն: